



ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ

...Յոգնատենչ՝ սիրով գրեցոյց գերերջանիկ և յոգներախտ Հայրապետն արքայնեալ՝ և արիաջան Հովուապետն ազգիս Հայոց և սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, ծնողն մեր հոգևոր և շնորհածին և տէրն մեր գթառատ, քաջ գիտնականն քանիքուն՝ և աստուածարեալ Պետն բազմաշնորհ և գերիմաստ Տէր Սիմէօն արքայնապետար կաթողիկոսն երևանցի՝ և ծայրագոյն քահանայապետն Հոգեւորմար, առ ի լինիլ ինքեան յիշատակ հոգևոր ի սուրբ Աթոռս Էջմիածին։ Որպէս զի՝ ինքն յաւորս իւր վայելեացէ՝, կատարելով զկարգս և զօրհնութիւնս արքայնագործոյս՝ և յետ փոխմանն իւրոյ յաշխարհէ՝ յետագայ յաջորդօրէն զԱթոռս սուրբ և փոխանորդքն իւր Հայրապետքն արքայանք զսոյն վայելելով՝ յիշեցեն զինքն ի սուրբ և ի մաքուր աղօթս իրեանց աստուածահաճոյս, հանդերձ ծնողօք իւրովք և հոգևոր դաստիարակօք։

...Որպէս և ի վարդապետութեան իւրում, և յաւորց հայրապետանալոյն իւրոյ մինչև ցարդ՝ տովին բարի և հոգեւաբն մախանձու վառեցեալ՝ արար և ստացաւ ինքեան զբաւում յիշատակս հոգևորս, թէ վասն հաւատարկութեան օգտի, և թէ յատկապէս վասն սրբոյ Աթոռոյս։ Ջորս մի առ մի թուելն պարագայիք՝ ըստ որում բերէ երկարութիւն, համատօնիք միայն անցանելով՝ զգլխաւորսն գոնէ ասացուք, առ ի չլինիլ ի մոռացօնս ի յետագայս։ Բանգի մախ ի վարդապետութեան իւրում արար զգիրս **Լուծմանց՝ Արտաքնոցն գրոց՝** այսինքն **Պորփիրի Ենթածութեան**, և **Արիստոտելի ստորոգութեանցն**

և **Պերարմենիասին**. և հինգերորդ **Առածիցն Դատի Անյաղթի**։ Յաւել և զԼուծմունս ի գիրս **Պրոկղի** իմաստնոյն, ի վերայ լուծմանն Սիմէօնի վարդապետին Ջողայեցոյ, յատկացուցեալ խաչաձև նշանիք զիրն։ Արար և **գերկահատոր գիրս քարոզից**, զառաջինն ըստ կերպի ճառից և ներքողինից. և գերկորդն տարեկան քարոզ։ Պարգարանեաց և **զհին Տօմարն Հայոց** և զնոր և **անշարժ Տօմար** ևս արար Հայոց։ Ապա ի հայրապետանալն իւրում, սկիզբն արար շինութեան սրբոյ Աթոռոյս...

...Հաստատեաց և զտպագրատուն ի սուրբ Աթոռոջս՝ ի հիսիսակողմն հայրապետարանին։ Եւ ի ֆռանկաց բերեալ զվարպետայս, շինեցոյց և զթղթահանութեան գործարան ի հարաւակողմն սրբոյ Աթոռոյս...

...Օժանդակութեամբ Խօջաջանեան Գրիգոր աղային Ջողայեցոյ ի Հինդ բնակեցելոյ՝ (որ զթղթատան և զտպագրատան ծախսն ամենայն ետ.) բերել ետ զվարպետսն ֆռանկաց որպէս ասացաք, և յաագոյն շինեցոյց զթղթատունն։ Եւ ի սոյն նորոգ տպագրատունս, թող զայլ գիրս՝ տպեցոյց մախ զփոքրիկ գիրք մի աղօթից իւր արարեալ կոչեցեալ **Ջրօսարան հոգևոր**։ Ապա **զՏօնացոյց՝** եկեղեցոյս Հայաստանեայց արագրեալ՝ տնդաւորեաց զտօնսն փոփոխականս, և կանոնաւորեաց, հանդերձ ալ ևս ուղղութեամբք։ Եւ զհատոր մի ևս արարեալ ի վերայ Լ.Զ տարեգրացն մերոց, կանոնաւորեաց զտեղիս և զժամանակս նոյն փոփոխական տօնիցն. եղեալ առնթր և զձայնս աւորցն՝ և զամսաթիւսն, ընդդէմ ախարարայից օրացուցին,

առ ի խափանել զայն: Եւ գերկուս հաստորսն ի միասին յոյժ գեղեցկապէս ետ տպել, և տարածեալ ընդ ամենայն ազգս մեր, գրեաց և կանոնաց մեծաւ հարկադրութեամբ՝ զայսբարմայից օրացոյցն մի՝ ևս ընդունիլ. այլ զկոր տօնացոյցն ածել ի գործ, որ և եղև այնպէս: Եւ զայլ բազում գործս բարութեան արար երջանիկ Հայրապետս մեր սրբաւնեալ. զորս այլ ոչ թուելով աստէն մի առ մի, թողուք այնմ, որ ի տիեզերական հրապարակին ունի յիշել, և զվարձս ըստ բարի և բազմաջան վաստակոցն հատուցանել: Քանզի զբազմազան բարութիւնս արար սրբոյ Աթոռոյս, զայծառացոյց յամենայնի գտորք եկեղեցին ազնիւ և մեծագին յիշատակօք՝ և սպասիք պատուականօք, և զգետիւք և հանդերձեղիցօք. զի ի պատճառս յաջողակութեան՝ և սիրելի գոյուն ամենայն ազգիս, և թղթովք օրհնութեան զամենեսեան շահելոյն, լցին յամենուստ գտորք տունս ազնիւ յիշատակօք և բազմազան բարութեամբք, մինչև յայնպիսեաց տեղեաց ևս՝ յորոց չէր մտեալ ի սուրբ Աթոռս գոնեայ լիագոյն ինչ տուրք հասարակ նուիրակութեան:

... Իսկ ի ԻԶ օրն յուլիսի՝ որ էր Վարդաւառի կիրակէն, փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն՝ բարի և երջանիկ մահուամբ, սրբաւնեալ և երջանիկ տէրն մեր և աստուածաբեալ Հայրապետն բարեջան՝ Տէր Սիմէօն սրբազան կաթողիկոսն. և ի յերկուշաբաթ օրն՝ թաղեցաւ ի ձախակողման գաւթի սրբոյ վանիցն Վայիսանէի սրբոնոյ կուսին, հուպ տեառն Արքայաճմու սրբազան կաթողիկոսին Մշեցոյ: Եւ զհամայն երկամբ ծնեալ զաւակունս իւր հոգևորս՝ եթող յորրութեան և ի սուգ անմխիթար. որոյ գիտցին լուսաւորեացէ Տէր՝ և հանգուցէ այցելութեամբ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ, դասելով ընդ ճշմարիտ հաւրապետացն սրբոց:

(Եփրեմ վրդ. Զորագեղցի, ապա կաթողիկոս (1809—1835), «Յիշատակարան», «Արարատ», 1896, էջ 496, 497—498, 500):

Նստի ի սուրբ Աթոռս Էջմիածին կաթողիկոս Տէր Սիմէօն Երևանցին: Որ է նախապետական հեղինակ գրքոյս, ի ՌՄԺԲ թողունք մերում: Եւ ի թագաւորութեանն Օսմանցոյ Աուլթան Մուստաֆային: Սա էր այր շնորհքնկալ, առատամիտ, գիտնաշատ, և լի իմաստութեամբ, լաւապէս տեղեակ Հին և Նոր կրակարանաց, և վարժ նրբից և արտաքին գրոց, սնեալ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց. սրբոյ Աթոռոյս: Սա ի սարկա-

ւագութենէ անտի որքան յԱթոռս գտանիր՝ ոչ դադարիր ի դաս ստելոյ, մինչև ի Վաթողիկոսութեանն ևս: Անձանձիր և անտըրտունց, և մանաւանդ յորդորող և հրաւիրող ի յուսումնասիրութիւն: Այլ և էր վարժ բանաստեղծութեան արհեստից, և համեղարան ի շարադրութիւնս. որ և ի սարկաւագութենէ անտի սա տայր գրագրաց սրբոյ Աթոռոյս զմուսավատայս և կարգաւորէր զարհեստս նոցին որպէս յատկապէս հայր և մատակարար նոցին ի կաթողիկոսութեանն ևս: Որ և ի տետերս մուսավատայից գոն բազում շարադրութիւնք շաղագիրք ի ամանէ գրեցեալք: Այլ և արար տա ի վարդապետութեանն, զլուծմունս բոլոր արտաքին գրոց գեղեցիկ և պարզ ոճով ի դիւրութիւն դասաւորաց և դասատուից, յորս գրեթէ ոչ ինչ է թողեալ զտարակուսելիս և զանհասկանալիս: Արար և զգիրս բարոզից ի յերկուս հատորս, զմին երկարաբան, ճառակերպ և ներքողեան ի վեցօրեայ արարչագործութիւնսն Աստուծոյ, ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, և ի սուրբ Աթոռս Էջմիածին, և յայլս հարկաւոր նիւթս և ի խորհրդայի բնաբանս: Եւ զերկրորդ հատորն տարեկան քարոզ, ըստ ասորց պատշաճաւորութեանն՝ կարճաւոր և զօրաւոր բանիւք: Որք երկուք հատորքն ևս օգնիչք՝ ձեռնադր և յարմարք են վարդապետաց և մանաւանդ Նուիրակացն սրբոյ Աթոռոյս: Արար նա և զկրկնապէս լուծմունս դժուարիմաց բանիցն Պրոկղի, որք եղեալք են զկնի լուծմանցն առաջնոյ լուծողի Սիմէօն վարդապետին խաչաձև նշանիւք: Արար և զփոքրիկ գիրք մի աղօթից, որ կոչի Զքոսարան հոգևոր, գեղեցիկ և պարզ ոճով: Այլ և վերանորոգմամբ կանոնաւորեաց զՏօնացոյցս մեր երկրորդմբ հատորօք ի վերայ ԼԶ գրոցն մերոց՝ անշարժ և մշտնջենաւոր ընթացմամբ:

Այլ և էր սա բարոյքն հեզ, պարզամիտ և համբերօղ, ներող և անյիշաչար կակղասիրտ և գթաշատ, ողորմած և առատաձեռն առ յամենեսեանսն, անընչաւոր և ազատաբարոյ, առ յոր գրեթէ՝ ամենայն ինչք աշխարհի որպէս կղկղանք էին համարեցեալք: Վասն որոյ և Աստուած ըստ բարոյցն յաջողէր և տայր առատապէս: Յորում ժամանակի էր սուրբ Աթոռս շնորհօքն Աստուծոյ լի ամենայնիւք հոգևորօք և մարմնաւորօք, ներքսականօք և արտաքսականօք, բեռնակրօք և լծկանօք, և կթելի անասնօք բազմապատիկ քան զառաջինն: Միաբանքն շատ հանգիստ և ապահով յամենայնի: Ի յաւորս տուր ոչ պակասեցան կերպակերպ արհեստաւորք և շինարարք ի յԱթոռոյս:

Քանզի ի կաթողիկոսանալն իւրում արար սա զբազում շինուածս և զբազմադիմի բարերարութիւնս սրբոյ Աթոռոյս:

Դարձեալ բարեմիտ և ազատաբարոյ Հայրապետս այս, որպէս էր յամենեցունց ի մերազնեայց և յայլազնեայց սիրեցեալ և պատուեցեալ նոյնպէս և էր առ յամենեւեան ահարկու և անդամի, յորմէ ամենեքեան երկընչէին և ակնածէին: Յատուր սորա միաբանք սրբոյ Աթոռոյս էին որպէս յատուր Մօրկայ, յորս ո՛չ ոք ի տաճկաց կարող էր հպել և կամ գրանս ինչ ծանուսն խօսիլ, որպէս սովոր էին ի յառաջիկան ի մէջ Աթոռոյս հայհոյել և գանել, և տանել յերևան քանտի և տուգանել: Վասն որոյ և արար սա գրագում գործս արժանի զարմացման և արձանագրեցման վասն ապագայից:

Եւ այսպէս ի կարգաւորելն զՏօնացոյցս մեր որպէս ասացաք, ապա ետես թէ՛ գրչագրովք ո՛չ էր հնար տարածել յամենայն Եկեղեցիս, վասն որոյ գուն գործեաց խրճիւղով զհնար, զի և զտպագրատուն ևս հաստատիցէ յԱթոռոյս. զոր և հաստատեաց իսկ յաջողմամբ Աստուծոյ ի ՌՄԺԹ թուոցն մերում: Յորում և ետ տպել մախապէս զՍաղմոս, զհրապետ տաղարանս, և զգիրքն մոսս, զհրապետ տաղարանս, և զգիրքն աղօթից **Ջրօսարան**, կոչեցեալն, ի փորձել զամենայն պարագայս գործոյն, ի ՌՄԻ և ի ՌՄԻԱ. թիւս: Եւ ապա ի ՌՄԻԳ. թուոցն ետ տպել զհրապետ Տօնացոյցն. զոր և սփռեաց յամենայն ազգս մեր ըստ մեծի մասին ձրիապէս, գրելով և զպատուիրական կոնդակունս յամենայն երկիր, զի զթոյնացոյցն լոթրանաց խոտիցեն և զհր Տօնացոյցն ի գործ ածիցեն, ի ՌՄԻԴ. թուոցն մերում: Եւ մինչ զտպագրատունն ևս հաստատեաց Աստուծով, ապա ետես թէ՛ ի հեռուստ և քեռամբ, և մանաւանդ մեծաւ ծախիւք քերելով զթոյնոյն՝ կարի դժուարաւ լինիւր և անձեռնառու այսմ գործոյ: Վասն որոյ հետամուտ լեալ այնմիտուն, զի և զթոյնաշինութեան արհեստն ևս մուծել յԱթոռս, զի յաջողակ լիցի գործն տպագրութեան. զոր և եմոյծ իսկ և հաստատեաց յաջողմամբն Աստուծոյ:

(Սիմեոն կաթողիկոս Երևանցի, **Ջամբռ**, Վաղարշապատ, 1878, էջ 88—84, 86, 48—44):

Նշելոյնոյնք այդ վիճակի մեջ էին Կ. Պոլսո մեջ 1780 տարվոյն կեսերը, երբ հանկարծ անակնկալ գործ մը, և անհաճո գործ մը, բոլորովին ուրիշ կողմ դարձուց **Ջաքա-**

րիայի գործունյա աշխույժը: Մայր Աթոռո գահակալ Սիմեոն կաթողիկոս կվախճաներ, և միաբանոյնը կշտապէր հաշորդն ալ ընտրել և օծել: Սիմեոն կաթողիկոսի արդյունավոր գործունեութենէն վերջին անգամ պատմեցինք տպարանի հիմնարկւթյունը 1771-ին (§ 2122), թղթագործարանի հաստատւթյունը 1776-ին (§ 2123), և նոր տոնացոյցի հրատարակւթյունը 1775-ին (§ 2128), որուն կիրառւթյունն ալ սկսած էր՝ 1777 տարվո կաղանդեն: Սիմեոնի կյանքեն և արդյունքեն շատացանք զխավոր կետերը հառաջ քերել, քանի որ մեզմե չէր կրնար տպաւիլ՝ որ կատարյալ կենսագրւթյուն մը տանք, որուն համար նյութեր ալ չէին պակսիր, մանավանդ յոր հիշատակարանին երկու հատորներով հրատարակւելեն ետքը Գլուտ Աղանյան ավագերեցին հոգածւթյամբ (ԴԻԻ. Գ. և ԴԻԻ. Ը): Սիմեոնի արդյունքներուն զլուրը կրնա դրվիլ կրթւթյան համար հոգածւթյունը, որով էջմիածին հավաքեց Նայյանի և Պաղտաւարի աշակերտութենէն առնել կրթւթերը, ինչպէս էին Հարւթյուն Բասենցի, Պետրոս Բերդումյան, Սահակ Ահագին կրտսերը, Պետրոս Ղափանցին, Ներսէս Աշտարակեցին, որոնց հետ կրնան հիշվիլ, նաև Հովսեփ Արղւթյան և Եփրեմ Ջորագեղցին (ԵԲՑ. Ա. 77): Բայց ոչ միայն իբրև ուսուցիչ, այլև իբրև շինարար, տնտեսագետ, վարիչ, քաղաքագետ, տպագրիչ, մատենագիր, շատ ընդարձակ և շատ քեղմնավոր արդյունավորւթյուն ունեցալ յոր կաթողիկոսւթյան մեջ: Նշանակալի է անոր ամեն կողմ տարածած հոգածւթյունը, և Հիշատակարանին մեջ տեսնված թղթակցւթյանց ցանկը՝ լուսավոր կերպով կհավատե թե հայ տարրին գտնված ամեն անկյունները, յոր մտադրութենէն վրիպած չեն, և ամեն տեղ հասած են յոր գիրերը՝ ուղղելու, խրատելու, հորդորելու և մխիթարելու համար: Տպարանը զինքն երկասիրւթյանց ալ հրապուրած էր, Տօնացոյցն ետքը հրատարակեց **Ջրօսարան**-Տաղարանի երկրորդ տպագրւթյունն ու Պարտաւճարը: Բայց չհասալ տպագրել երկհատոր **Քարոզագիրքը**, և Պորփյորի ու Արիստոտելի, Ահմադի ու Պրոկոփ եռահատոր՝ լուծմունքը: Յուր գործերն միայն **Ջամբռը** հրատարակվեցալ 1873-ին: Բազմաթիւ են նաև եկեղեցական գործերու համար անոր կազմած կանոնները, որոնք եթե Հիշատակարանն քաղվին՝ կրնային կանոնագիրք մը կազմել: Սիմեոնի գործունեւթյունը այնչափ ավելի զարմանալի կդառնա, որ ուծել ու տոկուն կազմւթյուն ալ չունէր, միհար էր մարմնով, ցալագար և հիվանդկոտ, այնպէս որ 1778 զարմնին դեռ 68 տարեկան եղած ատեն, բժիշկներ տեսնելով

անոր անկյալ և հյուծյալ վիճակը, անհրաժեշտ դատեցին, որ Էջմիածինի աննպաստ օդին հեռանա, և Արագածի ստորոտը, հովասուն բարձունքներու վրա հաստատեւ յոր բնակությունը (Դ.Ի. Գ. Ճղբ.):

• •

Հոգով ընկնված, մարմնով հյուծված, ցավերով սուզված, վշտագին օրեր անցուց Սիմեոն 1779—1780 ձմեռվան մեջ: Սրտակեզ եռանդով կշանար բան մը ընել, Աթոռին վնասները և ժողովուրդին թշվառությունները դարմանել, այլ կապակեին իրեն անձնական ույժն ալ, պահանջված միջոցներն ալ: Ներքին և արտաքին ցավերով շրջապատված տակալին կտոկար. անտանելի վիճակի մեջ ձմեռն ու գարունը բոլորեց, և վերջապես 70 տարեկան, բայց բոլորովին հյուծած հոգին ալանդեց, 1780 հուլիս 26, Վարդապետի կիրակի օրը ժամը 4-ին կեսօրվան մոտ (ՇԱՀ. Ա. 231): Հուղարկավորությունը կատարվեցավ մեռելոցի երկուշաբթին, և մարմինը թաղվեցավ ս. Գայանեի գավիթին հարավակողմը: Տապալանագիրը իբր իր բերանն գրված է (Դ.Ի. Գ. ճղբ), և անհավանական չէ որ կանխավ իրմե հորինված ըլլա: Սիմեոնի գործերուն և դիտումներուն մասին ինչ-ինչ դիտողություններ ըրած էինք, գլխավորապես Կոլոտի Ակատմամբ գրածներուն (§ 1946), Կ. Պոլսո պատմաբանության շուրջը ունեցած կարծիքին (§ 2085), և տոնացուցական կարգադրությանց վրա (§ 2127): Սակայն այդ չարգելքն որ չճանչնանք անոր վրա այն վեհ և ընտիր հոգիներեն մին, որ իրենց արթուն միտքով, լուրջ ջանքերով և անխնայ աշխատությանք տիպար գործիչը կկազմեն, և իրենց ժամանակին տիրապետող դեմքը կդառնան: Յուր վրա խոսած ատեննիս ջանացիք զանազան ճյուղերու մեջեն հիշել կարևոր գիտելիքները, որպեսզի զգալի կերպով ցուցվի նորա քաղմապիսի գործունեությունը, և այստեղ կրկին ամփոփելու պետք չեն տեսներ: Իրմե մնացած հիշատակներեն ամենեն գլխավորն է Մայր Աթոռ վարչության և մատակարարության մեջ՝ կարգ ու կանոն և զիր ու արձանագիւ մտցնելը, որ նոր ժամանակներու Ակարագիրը կկազմե, և Սիմեոն գրեթե անոր հիմնադիրը եղած կըլլա: Հիշատակելի է նաև վանական կամ միաբանական կառավարության մեջ իմաստությունը բոլորության տեղ փոխանակելը: Յուր օրով դադարեցավ խարազանին և զավագանին իբրև խրատի և ուղղության միջոց գործածվիլը, որով իրմե առաջ կխոշտանգվեին ամե-

նեն բարձրաստիճան և ամենեն պատկառելի եկեղեցականներն ալ (Դ.Ի. Գ. ճղբ): Տէր ողորմես սրտառույ աղոթքները, Արի Աստուած զգալուն երգը, և Ամենասուրբ Երրորդութիւն սովորական դարձած մաղթանքը, Սիմեոնի հեղինակություն են, որ իր ատեն իբրև կամալոր աղոթք պատեն առիթներու մեջ կգործածվեին, բայց այնչափ մեծ ընդունելություն գտան, որ այսօր պատարագներու և Եկեղեցներու և հսկումներու իբրև պարտալորիչ մաս նկատված են ու կգործածվին այնպիսի մտադրությամբ մը, որ կարծես թե Լուսավորիչն մնացած և անհիշատակ ժամանակներեն արմատացած ըլլալին: Երբ կդիտենք որ այս մաղթանքները անարվեստ հորինված մը ունին, կստիպվինք անոնց մեջ հայտնված զգացումին վերագրել՝ աղայես սրտագրալ եղած ըլլալը, և անոնց մեջ տեսնել Սիմեոնի եռանդուն և ազգասեր զգացումները:

(Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատմ., մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 3119—3120, 3122—3123):

• •

1768 թվականին Էջմիածնի կաթողիկոսական գահը բարձրացավ Սիմեոն Երնանցին, որ մինչև այդ հայտնի էր իբրև լավ ուսուցիչ, քարոզիչ և առհասարակ խելքով ու մեծ եռանդով օժտված մի հոգևորական: Նրա կաթողիկոսությունը տևեց 17 տարի (1768—1780), և այս համեմատաբար կարճ ժամանակամիջոցում նա ցույց տվեց այնքան քաղմակողմանի, եռուն գործունեություն, որ ամենայն իրավունքով կարող է համարվել ամենախուշոր անձնավորությունը 18-րդ դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ: Առանձնապես շեշտելի է, որ Սիմեոնին հովանավորում էր վերանորոգված Վրաստանն ի դեմս Հերակլ թագավորի: Գլխավորապես հենվելով Հերակլի քարեհան վերաբերմունքի վրա, վայելելով վրաց թագավորի աջակցությունը, Սիմեոն կաթողիկոսը մեծ եռանդով սկսեց քարեկարգություններ մացնել եկեղեցու գործերի մեջ, մանավանդ պաշտպան հանդիսանալ իր ժողովրդին: Արդեն այն հանգամանքը, որ Երևանը հարկատու էր Հերակլին, ինքն ըստ ինքյան բավական էր, որ խանի հարաբերություններն Էջմիածնի հետ համեմատաբար մեղմ բնույթ կրեին: Թիֆլիսի արքունիքի և Էջմիածնի կաթողիկոսարանի փոխադարձ վերաբերմունքը միանգամայն մոտեմական էր, և այս բանն, իհարկե, շատ լավ հայտնի էր ամբողջ մահմեդական ազգահակությունը: Երեվանի խանն, ինչպես և ուրիշ մահմեդական մանր-մունր իշխողներ, հաճախ էին դի-

մում հայոց «խալիֆային», խնդրելով նրան միջնորդ լինել իրենց և Հերակլի միջև գաղափարներ հարցերի առիթով: Սիմեոնն ընդունում էր այդ դերը և մեծ մասամբ հաջողեցնում էր մահմեդականների խնդիրքները: Այսպիսով նա վաստակեց մեծ հեղինակություն, ասացավ գործելու ազատություն:

Եկեղեցական պատմության է վերաբերում ցույց տալ, թե Սիմեոն կաթողիկոսն ի՞նչ շտկումներ և բարեփոխություններ մտցրեց եկեղեցու ներքին կյանքի և ծիսակատարությունների մեջ: Մենք կհիշատակենք միայն ամենախոշորը—տոմարի բարեկարգությունը:

• •

Այնուհետև պետք է հիշատակել Սիմեոնի շինարարությունը: Էջմիածնում նա բազմաթիվ անհրաժեշտ շինություններ կառուցեց, բարեկարգեց միաբնակության կեցությունը, վանքի տնտեսությունը: Բարեկարգելով ընդհանրական Աթոռը, նա միևնույն ժամանակ մեծ արիության և համատարած արշտպանում էր նաև այդ Աթոռի ընդհանրական շահերն ամեն տեղ, ուր նրանք վտանգված էին լինում: Այսպես, նա երկար մաքառումների միջոցով կարողացավ Էջմիածնին հպատակեցնել Գանձասարի կաթողիկոսին, շատ ճարտար կերպով շահագործելով այն նպատակով հանգամանքը, որ այդ ժամանակ հակառակ կաթողիկոսներ կային, և ժողովուրդը՝ զգլված նրանց մրցություններից և հարուցած խռովություններից՝ դիմում էր Էջմիածնի հեղինակավոր դատաստանին և պահանջում էր, որ վերացվի երկպառակությունը:

• •

Էջմիածինն իր նվիրակների միջոցով, որոնք շրջում էին ամենուրեք, ուր հայ ազգաբնակչություն կար, նշանավոր գումարներ էր հավաքում: Այդ գործը Սիմեոնն ավելի բարեկարգ դրության մեջ դրեց՝ աշխատելով, որ ամեն տեղ որոշ կարգ ու կանոն հաստատվի, ուստի նվիրակությունները բաժանեց որոշ թեմերի, հաստատեց հաշվետվություն: Մանավանդ մեծ էին Սիմեոնի ջանքերն Էջմիածնի կաթվածները՝ հափշտակողներից ազատելու, նոր կաթվածներ ձեռք բերելու և առհասարակ կաթվածատիրությունը օրինական փաստաթղթերով Էջմիածնի վրա հաստատելու համար: Այդ նպատակով նա ձեռնարկեց մի շատ կարևոր և հետաքրքրական աշխատության, այն է՝ կազմեց կաթվածների մանրամասն ցուցակը, հին թղթե-

րից հաճած տեղեկություններով ցույց տվեց, թե ե՞րբ է այս կամ այն կաթվածը դարձել Էջմիածնի սեփականություն, ի՞նչ կաթվածաթղթերով կամ թագավորական հրովարտականերով, ի՞նչ վեճեր են եղել այդ կաթվածների առիթով և այլ այսպիսի գործնական և կարեւոր տեղեկություններ: Այդ բոլորը նա հավաքեց «Ջամբո» անունով իր աշխատության մեջ, որ կարելի է անվանել Էջմիածնի իրավական դրության հանրագիտարան: Հայց եռամսհուն կաթողիկոսին միայն վարչական գործերը չէին զբաղեցնում: Նա գրասեր և կրթասեր մարդ էր և շատ աշխատում էր դարձնել Էջմիածինը նաև մի մտավոր կենտրոն: Այդ նպատակով նա հատուկ դիմումներ արավ իր հնդկաստանցի ծանոթներին, որոնց հետ անձնական հարաբերություններ էր ունեցել այն ժամանակ, երբ ինքն Էջմիածնի նվիրակ էր Հնդկաստանում: Այդ ծանոթներից ասացած նվերներով Սիմեոնը տպարան բաց արավ, առաջին հայկական տպարանը ոչ միայն Էջմիածնում, այլև ընդհանրապես Հայաստանի հողի վրա:

• •

Հայց տպարանը դեռ այն աստիճան զարմանալի մի մեծագործություն չէր. Սիմեոնն, այդ գործի հետ միասին, հասկանում էր, թե ո՞րքան դժվար պիտի լինի տպարանին թուղթ մատակարարելը: Թուղթը պետք էր բերել տալ Եվրոպայից, իսկ այդ բանը չափազանց դժվար էր, ի նկատի ունենալով հաղորդակցության միջոցների ողորմելի դրությունը և անապահովությունը: Ուստի նա հիմնեց Էջմիածնում նաև թղթի գործարան, վարպետներ բերել տալով Եվրոպայից: Այստեղ արդեն լիովին արտահայտվում էր Սիմեոնի կաթողիկոսի խիզախ, ձեռնարկու ոգին, կամքի ուժը, վառ սերը դեպի կուլտուրական հիմնարկությունները:

• •

Հայց Սիմեոն կաթողիկոսի ամենից նշանավոր գործն այն էր, որ նա շարունակեց և զարգացրեց իր նախորդի՝ Հակոբ Ջուղայեցու՝ սկսած հարաբերությունները Ռուսաց արքունիքի հետ: Ռուսաստանի հայ գաղութները, ինչպես կտեսնենք նրանց պատմության մեջ, հոգևոր գործերի նկատմամբ շատ անմխիթար դրության մեջ էին գտնվում: Նրանց եկեղեցիները վարչական կողմից ենթարկված էին հոգևոր իշխանությանը և շատ զրկանքներ, երբեմն նաև խիստ հալածանքներ էին կրում մոլեռանդ ուս հոգևորականներից: Ռուսաստանի այդ ցիրուցան համայնքներից մի թեմ կազմելու և Էջմիած-

նի իրավասության տակ դնելու համար, Սիմեոն կաթողիկոսը 1766 թվականին Պետերբուրգ ուղարկեց Դավիթ վարդապետին, ներկայացնելու համար Եկատերինա Բ-ին նրա գրած կոնդակը, նույնպես և սրբերի մատուցմանը: Կոնդակի մեջ Սիմեոնը խնդրում էր, որ կայսրոսին հրովարտակով հաստատի Էջմիածնի իրավասությունը Ռուսաստանում ապրող բոլոր հայերի վրա: Բայց, ինչպես երևում է, Դավիթ վարդապետն ուրիշ հանձնարարություններ ու խնդիրներ էլ էր տարել, որոնք վերաբերում էին հայերի դրության: Այսպես հասկանալ է տալիս Եկատերինայի պատասխանը, որ ճիշտ այնպես էր, ինչպես խնդրել էր կաթողիկոսը: Այս հրովարտակը, որ գրվեց 1768-ի հուլիսի 30-ին, ոչ միայն Էջմիածնի թեմ էր հրատարակում Ռուսաստանի բոլոր հայ գաղթականությունները, այլև վկայում էր, թե կայսրոսին իր հովանավորության տակ է ընդունում կաթողիկոսին, հայ յուզբաշխներին և հայոց ամբողջ ազգը, որոնց ամենքին հուսադրում է իր ուղորմությամբ: Թե որքան բարձր էր համարում Սիմեոնն այս հուսադրությունը և թե՛ առհասարակ՝ որքան անկեղծ էր նա իր զգացմունքների մեջ դեպի Ռուսաստանը, կարելի է եզրակացնել նրանից, որ նա գրեց հատուկ մատյանը ռուսաց ցարերի և նրանց տան արևշատության համար, և այդ մատյանը կատարվում էր ռուսաց պետության ենթարկված բոլոր հայ եկեղեցիներում մինչև ցարական կարգի խորտակումը Ռուսաստանում 1917 թվին:



Ահա այս շատ կարևոր ժամանակներում Սիմեոն կաթողիկոսը Ռուսաստանի հայոց առաջնորդությունը հանձնեց դեռ երիտասարդ Հովսեփ եպիսկոպոս Արղությանին, որ Սանահին գյուղից էր և աշակերտել էր Սիմեոնին: 1773 թվին նա գնաց իր նոր պաշտոնատեղին, որ Աստրախան քաղաքն էր: Այս էլ մի շատ խոշոր քաղաքական քայլ էր: Արղությանն, իբրև Սիմեոնին շատ մոտիկ մարդ, անշուշտ շատ լավ գիտեր նրա քաղաքական հայացքները: Ռուսաստանում նա մի պարզ առաջնորդ չէր, այլև քաղաքական մի նշանավոր գործիչ, որ, ինչպես կտեսնենք, ահագին դեր կատարեց 18-րդ դարի վերջին քառորդի հայկական շարժումների մեջ:



1779 թվականին Էջմիածնի նորահաստատ տպարանն սկսեց տպագրել Սիմեոն կաթողիկոսի մի հեղինակությունը, որ կոչվում էր «Պարտավճար»: Այս վերնագիրը

բացատրվում էր այսպես: Իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս, Սիմեոնը պիտի ման գար ամեն տեղ, իր հոտի հետ խոսեր ժամանակի մեծ ցավի մասին, խրատեր ու հորդորեր ամենքին. բայց որովհետև չի կարողանում ամձամբ շրջել, ուստի իր հոտի հանդեպ իր պարտքը վճարում էր այդ գրքով: Բայց այդ ի՞նչ մեծ ցավ ու հոգս էր: Գիտենք արդեն, որ հենց այդ միջոցին Արարատյան երկիրը մեծ տառապանքների մեջ էր քաղաքական պատճառներից: Սակայն հայ ժողովրդի ցավն այդ չէր: Հարցը վերաբերում էր դարձյալ նույն վեճին, որ բորբոքված էր միաբնակների և երկաթնակների, լուսավորչականների և կաթողիկոսների միջև: Նայյազնի և ուրիշ հեղինակների վիճաբանական գրվածքներից հետո էլ Սիմեոն կաթողիկոսը գտնում էր, որ իրեն էլ խոսք է վերապահված հայրենի եկեղեցու ինքնուրույնությունն ու անկախությունը պաշտպանելու համար: Եվ «Պարտավճար»-ը նվիրված էր այդ նպատակին: Նրա ստաջին մասը դավանական-աստվածաբանական տեսություններ է պարունակում, որոնք ցույց են տալիս, թե հենց միմիայն միաբնակությունն է ամենաուղիափառ դավանությունը: Բայց եթե Սիմեոնի գործի մեջ կա ինքնուրույնություն, այդ վերացական դատողությունները չեն: Երկրորդ մասի մեջ նա ստաջ է քաշում, իբրև երկաթնակների դեմ կուլելու հզոր միջոց, ազգային զգացմունքը: Սիմեոնը, իբրև Արարատյան երկրի բնակիչ, ներկայացնում է արարատյան հայրենասիրությունը, մի վառ և մեծագործ զգացմունք, որ հաճախ է երևան եկել մեր գրականության և կուլտուրական առաջադիմության մեջ, սկսած Դազար Փարպեցուց: Հայ երկրի սիրտը կազմող Արարատյան երկրի շունչը, որ հայության շունչն է եղել դարերի ընթացքում, Սիմեոնի համար մարմնավորում էր Էջմիածնի, իբրև ընդհանուր հայությունը միացնող մի նվիրական կենտրոնի մեջ: Էջմիածինը մի պաշտամունք էր նրա համար, և նա ուզում էր, որ ճիշտ այդպիսի պաշտամունք Մայր Աթոռը դառնա և ամբողջ հայության համար: Այն ժամանակ այդ համագային պաշտամունքի հմայքն ու մեծ հեղինակությունը բավական կլինե՞ն կաթողիկ պրոպագանդը ոչնչացնելու համար: Արարատյան դաշտի հմայքը նա ներկայացնում էր գրքի մեջ դրված մի բավական խելոճ պատկերով, որի վերևի մասում գրված էր. «Հոչակեալ դաշտ Արարատեան»: Պատկերի մի կողմում նկարված էր Արագած սարը, որի վրա կախված էր Լուսավորչի կանթեղը, ինչպես ասում էր ժողովրդական սրտառույ ավանդությունը, մյուս կողմին՝ Մասիսը, որի վրա պահված է Նոյի տապանը: Իսկ այդ երկու սարերի տակ նկարված էր Գրիգոր

Լուսավորչի տեսիլը, որի մեջ հրեշտակը ցույց է տալիս, թե ինչպես Քրիստոս երկրնաբնից, շրջապատված հրեշտակներով, Էջմիածնի տաճարի հիմնարկությունն էր պատվիրում: Եվ միաժամանակ ձերուհի կաթողիկոսը շերմապես կոչ էր անում հայերին չմոռանալ Էջմիածինը, հորդորում էր, խրատներ էր տալիս ազգային միությունը պահպանելու համար:

• •

Սիմեոն կաթողիկոսի գրչին է պատկանում և մի ուրիշ հետաքրքրական աշխատություն, որ հարյուր տարուց ավելի ձեռագիր մնալուց հետո տպագրվեց 1873 թվին Վաղարշապատում հետևյալ վերնագրով. «Ջամբո գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնակից որպիսութեանց արքոյ Աթոռոյս, և իւրոց շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէօն ցաւահար և վըշտակօծ կաթողիկոսէ Երևանցոյ... Յամի ներմարմնութեան Տեսոն 1785»: Այս քաղական ստվար աշխատությունը միփյալ է դարձյալ Արարատյան հայրենասիրության բարձր պաշտամունքին, Էջմիածնին:—Սիմեոնն այստեղ հանդիսանում է պատմագիր, որի առջև դրված է նպատակ—պաշտպանել Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի ընդհանրական, համազգային իրավունքները, պարզաբանել նրա կալվածական դրությունը և տնտեսական կարողությունը, և առհասարակ ցույց տալ, թե ի՞նչ է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, ի՞նչ է նրա ներկան և ի՞նչ պիտի լինի ապագան: Այս նպատակով նա տալիս է Հայոց եկեղեցական պատմությունը, որքան նա կապված է Էջմիածնի հետ, կաթողիկոսների համառոտ կենսագրությունները՝ սկսած Աթոռի վերանորոգման ժամանակից, այսինքն 15-րդ դարից: Հետաքրքրական են մանավանդ այն լուսաբանությունները, որ բերում է հեղինակը՝ բացատրելու համար, թե ինչպես հակաթոռ կաթողիկոսությունների, պատրիարքությունների (օր. Կ. Պոլսի) միջոցով ջլատվեց ընդհանրական Աթոռի իրավասությունը և թե ինչպես Էջմիածնի կաթողիկոսի իրավունքները հետզհետե հափշտակեցին պատրիարքներն ու հակաթոռ կաթողիկոսները: Սիմեոնը ոչ միայն լուսաբանում է, այլև տալիս է պատմական կարևոր փաստեր: Այնուհետև ամբողջ հայոց գրականության մեջ նմանը չունեցող մի ընդարձակ բաժին է պարունակում «Ջամբո»-ը—Էջմիածնի տնտեսական պատմությունը, որ հիմնված է կալվածագրերի, շահերից, սուլթաններից և այլ տիրողներից տրված թղթերի վրա: Սիմեոնը

կարգի է բերել Էջմիածնի դիվանում պահվող բոլոր կալվածական գործերն ու թղթերը և նրանցով տալիս է մի ընդարձակ պատկեր, որի մեջ տեսնում ենք, թե ո՞ր կաթողիկոսները փողով գնել են կալվածներ, իրենց ծախսով ջրանցքներ են շինել և այլ տնտեսական ձեռնարկություններ գլուխ բերել, բայց գլխավորը՝ թե ի՞նչ ջանքեր են գործ դրել դարերի ընթացքում, որպեսզի վերանորոգեն Էջմիածնի խանգարված տիրապետությունն այդ գյուղերի և հողերի վրա, ի՞նչ դիմումներով և կարողացել են առնել Էջմիածնական կալվածները զանազան հափըշտակողների ձեռքից: Ստացվում է այն ժամանակների իրավական դրության և դատատանական-վարչական բարքերի մի կատարյալ տեսարանացույց, որի մեջ դեմքերն ու դեպքերը հաջորդում են իրար՝ իրականությունը կենդանացնելու համար: Մահմեդական տիրողների թղթերից երևում է և այն, թե երբեմն ի՞նչ տեսակ «արտոնություններով» էին նրանք երջանկացնում իրենց հայ հպատակներին, օրինակ՝ հրապարակով եկեղեցական պաշտամունք կատարել, եկեղեցական կարգով մեռել թաղել և այլն: Մինևույն ժամանակ Սիմեոն կաթողիկոսի հավաքած վավերագրերը ցույց են տալիս, թե տնտեսական և կուլտուրական ի՞նչ խոշոր կենտրոն էր Էջմիածինն Արարատյան դաշտի համար և թե ո՞րքան մեծ է եղել նրա դերն իբրև գյուղատնտեսությունն զարգացնող և տարածող:

• •

Բայց քանաստեղծ կաթողիկոսներից ու շաղրության ամենից շատ արժանի է Սիմեոն կաթողիկոսը: Նրա քանաստեղծությունները հավաքված են մի փոքրիկ տետրակի մեջ, որի վերնագիրն է. «Տաղարան փոքրիկ շարահիսեցեալ ի Սիմէօն արքազան Կաթողիկոսէ Հայոց լայ և այլ ժամանակ»: Մենք արդեն բնորոշել ենք այդ կաթողիկոսին իբրև հարազատ ներկայացուցիչ Արարատյան այն շերմոտ հայրենասիրության, որ այնքան գեղեցիկ օրինակներ է տվել մեր գրականության: սկսած Ղազար Փարպեցուց: Սիմեոնը երգել է եկեղեցական տոներ և կրոնական պաշտամունքներ, բայց նրա ոգևորությունն առանձին թափ ստանում է այն ժամանակ, երբ երգի կրոնական առարկան կապ ունի Արարատյան երկրի հետ: Մենք տեսանք, թե որքան տանջվում էր հայ ժողովրդի կրած անհուն տառապանքներից: Եվ ահա նա իր ամբողջ սիրող սիրտը, իր հուսահատական պաղատանքը դնում է մի երգի մեջ, որ ստացել է ահագին ժողովրդականություն, որովհետև խոսում է հայ ժողովրդի սրտից ու

զգացմունքից: Հայտնի է, որ հայոց եկեղեցին ունի այսպես անվանված՝ «ցամառն ժամ», որ կատարում է ամեն անգամ, երբ որևէ դժբախտություն, լինի դա քնական պատահար (երաշտ, անշափ անձրևներ, մորեխ, ժամտախտ և այլն), թե թշնամու արշավանք, կոտորածի սպառնալիք, գալիս էր հարվածելու հասարակությանը: «Ցամառն ժամ»-ի գլխավոր գործողությունն էր լաց ու պաղատանքով «Տէր ողորմեա՛» կանչել: Սիմեոն կաթողիկոսը հորինեց մի երգ, որ պիտի երգվեր այդ «Տէր ողորմեա»-ի հետ: Դա «Արի Աստուած»-ն էր:

Հայ ժողովրդի դարավոր տառապանքները, դարավոր արտատրեքներն են լալահառաչ և պաղատագին խոսում այս համեստ և պարզ երգի յուրաքանչյուր տողից: Եվ մա իբրև հայցվածք մտավ եկեղեցու մեջ, երգվում էր պատարագի վերջում, երգվում էր «ցամառն ժամին», երբ ամբողջ ժողովուրդը ձնկաշոր հառաչում էր և երբ հաճախ այդ հառաչանքները փոխվում էին կանանց սուգ ու շիվանի:

Մենք սասցիներ իր տեղում, որ Սիմեոնի համար մի ամբողջ պաշտամունք էր Էջմիածինն իբրև արարատյան հայրենասիրության վեհագույն մարմնացում, որ միաժամանակ մարմնացնում էր և ամբողջ հայոց ազգի գաղափարը: Եվ միանգամայն հասկանալի է, որ Սիմեոնն իր ներքողների և բանաստեղծական դիմումների մեջ խոշոր տեղ նվիրել է Էջմիածինին: Հեռու գտնվելով ամենայն հայոց այդ սրբավայրից, Սիմեոնը հալվում, մաշվում է նրա կարոտով...

• •

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Սիմեոն կաթողիկոսի հայրենասիրական գաղափարներն ու պաշտամունքները կրոնական ձևերի մեջ էին արտահայտվում: Մենք արդեն գիտենք, որ մա ուրիշ կերպ չէր էլ կարող մտածել ու հավատալ: Հիշենք, թե որքան խիստ քաջատական էր նրա վերաբերմունքը դեպի Հնդկաստանի ազնուական-ապստամբական գաղափարները: Բայց զգացմունքով ջերմացրած տողերը չէին կարող չազդել սրտերի վրա, ընթերցող հասարակություն չպատրաստել: Սիմեոնի այս տաղարանը շուտ սպառվեց և նորից տպագրվեց «ի թախանձանաց սիրատարի խնդրողաց», ինչպես վկայում է երկրորդ հրատարակության վերնագիրը:

(Առ, Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946, էջ 770, 771, 771—772, 772, 772—773, 773, 957—958, 959—960, 1059—1060, 1062):

Սիմեոն Երևանցի, կաթողիկոս Հայոց «1763—1780 թթ.» աշակերտ էր Էջմիածնի դպրոցի, ապա ինքն էլ ուսուցիչ նույն դպրոցում. հասցրել է բազմաթիվ աշակերտներ: Նախապես նվիրակ էր և շրջել էր Տաճկաստանի, Պարսկաստանի և հեռու Հնդկաստանի Հայոց թեմերը: Վարդապետ ժամանակ գրել էր Լուծմունք Պորսիիսի, Արիստոտելի, Դալթի, Պրոկտի (այս գրքի հորինման մասնաբանն հիշատակարանը 1750 թվից՝ տես Ջեռ. Թար. 124—5), Քարոզգիրք և Պարզաբանություն հայ Տոմարի: Կաթողիկոսության ժամանակ աշխատեց Էջմիածինը դարձնել լուսավորության կենտրոն և կապել ամեն տեղ ցրված հայերի հետ: Հիմնեց Ռուսաստանի թեմը, դադարեցրեց կաթողիկական պրոսպագանդան Ախալցխա, Ալաշկերտ և Բայազետ: Հաստատեց Էջմիածնում տպարան «1771 թ.», թղթի գործարան «1776 թ.»: Կարգի բերեց հայ եկեղեցու տոները, որի համար հորինեց Տոմացույցը (տպ. Էջմիածին «1774 թ.»): Իր վերջին գործերն են Պարտավճարը և Ջամբոր: Ունեցել է մեծ քաղաքական գործունեություն, ծառայելով իբրև միջնորդ հաշտության Երևանի խանի և Վրաց Հերակլ թագավորի միջև և կանցնելով այս վերջինի արշավանքը Երևանի վրա: Սիմեոնը վրացական տպագրական գործին էլ նպաստեց՝ նվիրելով Վրաց թագավորին մի տպագրական մամուլ «1778 թ.»—Մ. Մաշտ. 387 ա. Ջամբո, 38—44. Ազգայ. 3019—3136. Լեո՝ Հայկ. տպ. Բ. 574:

(Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բանարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 518—519):

• •

Հայկական տպագրությունն իր սկզբնավորումից սկսած երկար ժամանակ զարգացավ օտարության մեջ: Այդ ընթացքում եղան մտադրություններ, մասնավորապես տպագրությունը հայոց քնաշխարհում հաստատելու ուղղությամբ, սակայն միշտ մնացին սպարդյուն: Մի շարք հանգամանքներ և գլխավորապես Հայաստանում տիրող քաղաքական խիստ տարափոխիկ կացությունը հնարավորություն չէին տալիս երկրի որևէ վայրում տպարան հիմնելու: Այդպիսի հնարավորություն ստեղծվում է միայն XVIII դարի երկրորդ կեսին Սիմեոն Երևանցու կաթողիկոսության (1763—1780) օրով:

Նախքան կաթողիկոս ընտրվելը, Սիմեոնը՝ իբրև Էջմիածնի նվիրակ, ապրել էր Կոստանդնուպոլսում, ծանոթ էր տեղի հայկական գաղութի մշակութային կյանքին և մաս-

նապորապես տպարանների աշխատանքին: Եղել էր նաև Զմյուռնիայում, աջակցություն ցույց տվել այնտեղի հայկական տպարանի աշխատանքին: Հայրենիքում տպարան հիմնելու միտքը նրա մեջ հաստատվել էր դեռևս այն ժամանակ, գուցե և ավելի վաղ, երբ նվիրակ էր Մադրասում ու տեղի հարուստ վաճառական Գրիգոր Միքայելյան-Չափկյանից խոստում էր ստացել հայրենիքում կառուցվելիք մի տպարանի ծախքերը հոգալու:

Կաթողիկոս դառնալուց երկու տարի անց Սիմեոնը նամակներ է գրում Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա իր ներկայացուցիչներին՝ հորդորելով նրանց ձեռք բերել հայկական տպատառեր և մամուլ՝ Էջմիածին տեղափոխելու համար, քայց հաջողության չի հասնում:

Ի վերջո, նա որոշում է տպարան հիմնել տեղի ուժերով: Դրամական մեծ օգնություն է ստանում Գ. Միքայելյան-Չափկյանից: Էջմիածնում սկսվում են տպարանի շենքի կառուցման, տպագրական պարագաների պատրաստման աշխատանքները: Ստեղծվում է գրաձուլարան: Աշխատանքներին և ուսնդուն մասնակցում են կաթողիկոսի տեղապահ Մկրտիչ արքեպիսկոպոս Ծոռոթեցին և Էջմիածնեցի ոսկերիչ Հարությունը, որը պատրաստում է զարդերի ու պատկերների տպատախտակներ: Տպագրական ձեռքի մամուլը նույնպես պատրաստվում է այս անձանց ջանքերով:

1771 թ. Էջմիածնի տպարանն սկսում է գործել: Աշխատողները՝ գրաշարներ, տպագրողներ, սրբագրիչներ, Էջմիածնի միաբանության անդամներն էին: Նորաստեղծ տպարանը կոչվում է Գրիգոր Լուսավորչի անվամբ: Այստեղ ևս ամենից առաջ սկսում են տպագրել մի Սաղմոսարան, որը, սակայն, անհաջող է ստացվում և ոչնչացվում է: Հաջորդ՝ 1772 թ., սկսվում է Սիմեոն Երեմյանցու «Ջրօսարան հոգևոր» աղոթագրքի տպագրությունը, որն ավարտվում է հաջողությամբ:

Այսպես, Սիմեոն Երեմյանցուն հաջողվում է անել այն, ինչ դեռևս XVI դարից եղել էր հայ շատ գործիչների երազանքը՝ հայրենիքում տպագրել հայերեն գրքեր: Եվ հայկական տպագրությունն իր սկզբնավորման օրից սկսած մոտ 260 տարի հայրենիքից դուրս պանդոխտ մնալուց հետո, վերջապես ոտք է դնում հարազատ հողին:

Հայաստանում տպագրված առաջին գիրքը՝ «Ջրօսարան հոգևոր» փոքր չափսի է (7,5×10,5 180 էջ), պարզունակ, քայց դյուրընթեռնելի շարվածքով, կաշեպատ կազմը գեղեցիկ զարդերով հանելի տեսք է տալիս գրքույկին: Այն սկսվում է հեղինակի սուա-

ջաբանով, իսկ վերջում կա ընդարձակ հիշատակարան, որի մեջ պատմվում է տպարանի հիմնադրման հանգամանքների մասին: Նկարագրվում է Երեմյանի խանության և վրաց Հերակլ թագավորի միջև 1768—1771 թթ. տեղի ունեցած արյունոտ պատերազմը, որը մեծ վնաս է տվել հայ բնակչությանը: Պատերազմի պատճառով տպարանի բացումը մի քանի տարով ուշացել է:

1773 թ. Էջմիածնի տպարանում լույս է տեսնում Սիմեոն Երեմյանցու «Տաղարանը», հեղինակի մի շարք բանաստեղծություններից: Հաջորդ տարին տպագրության է հանձնվում և 1775-ին լույս ընծայվում կաթողիկոսի կազմած «Տօնացույցը», որ 564 էջանոց գիրք է և արդեն աչքի է ընկնում հաջող տպագրությամբ, ունի բազմաթիվ գեղեցիկ զարդեր ու պատկերներ, որոնք Հարություն Էջմիածնեցու հեղինակածն էին: Վերջինս, կատարելագործվելով գրադրատարակչական աշխատանքում, շուրջ քսան տարի ամենագործուն մասնակցություն է ցուցաբերում Էջմիածնի տպարանի աշխատանքին, ստաջնակարգ արվեստով ձևավորում մի շարք հրատարակություններ:

Տպարանի կատարելագործմանը նպաստ է բերում նաև նշանավոր Պողոս Արապյանը, որը Կ. Պոլսից գալով Կովկաս, կանգ է առնում Էջմիածնում (լինում է նաև Թիֆլիսում, որ 1782—1783 թթ. Հերակլ թագավորի պատվերով սարքավորում է արքունի տպարանը և վրացերեն երկու գիրք տպագրում):

Էջմիածնի տպարանի աշխատանքներին խանգարում էր թղթի պակասը: Թուղթը բերվում էր Եվրոպայից, որը մեծ դժվարությունների ու ծախսերի հետ էր կապված: Սիմեոն Երեմյանցին որոշում է տեղում կառուցել նաև թղթի գործարան: Նա Կոստանդնուպոլսից հրավիրում է երկու օտարազգի մասնագետ: Գործարանի կառուցման դրամը տրամադրում է նույն հնդկահայ Գ. Միքայելյան-Չափկյանը: 1776-ին Հայաստանի առաջին թղթի գործարանն արդեն աշխատում էր (քամրակի հումքով): Էջմիածնի թուղթը, որ քաղական որակով է, 1779 թ. սկսում է օգտագործվել Սիմեոն Երեմյանցու «Պարտավճար» դավանաբանական երկի տպագրության համար:

Դուկաս Կարնեցու գահակալության (1780) սկզբի տարիներին տպարանի աշխատանքը, չնայած մի փոքր թուլանում է, քայց արդեն 1785-ին լույս ընծայված Ժամագիրքը վկայում է, որ Էջմիածնում տպագրական արվեստը լուրջ առաջընթաց է կատարել: Նույն որակի հրատարակություն է նաև Հովսեփոս Փլաքիոսի 1787 թ. տպագրված «Յաղագս պատերազմի հրեից» գիրքը՝ Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ: 1787—1789 թթ. ս.

Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը լույս է բնծայում մասնաժամանակ, Խորհրդատու, Շարակնոց, իսկ 1793-ին՝ երրորդ անգամ Սիմեոն Երևանցու «Տաղարանը», որից հետո քաղաքական խառնակ պայմանների հետևանքով Հայաստանի միակ տպարանի աշխատանքը կանգ է առնում քսուորդ դարով և վերսկսվում 1818 թ.՝ Եփրեմ կաթողիկոսի օրոք:

Մինչև XVIII դարի վերջը Էջմիածնի տպարանը լույս է բնծայել 12 անուն գիրք: Այս քանակը, հասկանալի է, որ մեծ չէ հայ հնատիպ գրքի ստեղծման ու տարածման առումով: Էջմիածնի տպարանի հիմնադրումից հետո էլ դեռ քաղաքական ժամանակ հայերեն գրքերի հրատարակության գլխավոր կենտրոնները մնում էին Հայաստանից դուրս: Մայր Աթոռը դեռևս անհրաժեշտ գրքերը շարունակում էր պատվիրել դրսում, գլխավորապես Կ. Պոլսի և Ն. Նախիջևանի (ապա Աստրախանի) տպարաններում: Եվ, այնուամենայնիվ, մինչև XVIII դարավերջ Էջմիածնում տպագրված այդ մի քանի անուն գրքերը արդեն հայաստանյան հրատարակություններ էին: Ինքնըստինքյան մշակակալից է այն փաստը, որ ավատական ծայր հետամնացության մեջ, պետականությունից վաղուց զրկված, հակառակորդ քանակների, բախման թառերարեն հանդիսացող Հայաստանը դարձել էր գրահրատարակչության երկիր:

1512 թ. մինչև 1800 թ. հայ տպագրիչների ջանքերով տարբեր երկրներում լույս ընծայվեց մոտ 1000 անուն մեսրոպատառ գիրք: Դա փոքր քանակ չէ, եթե նկատի ունենանք, որ մինչև այդ թվականը շատ ու շատ լեզուներով ընդհանրապես գրքեր լույս չտեսան, իսկ հնատիպ գիրք ունեցող մի շարք փոքր ազգեր մինչև XVIII դարի վերջը կարողացան իրենց ազգային լեզվով հրատարակել մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր գիրք: Խորհրդային Միության ժողովուրդների հնատիպ գրականության մեջ հայերեն հնատիպերը քանակով երկրորդ տեղում են (ռուսերեններից հետո):

Բովանդակությամբ այդ հազար անուն գրքերը շատ բազմազան են: Գերակշռում են կրոնական-եկեղեցական հրատարակությունները, քայց և զգալի քանակ է կազմում գիտական և ուսումնական (գլխավորապես լեզվաբանական, փիլիսոփայական, քննադատական, բժշկական, աշխարհագրական) գրականությունը: Հայ պատմիչների երկերի հրատարակությունները, ինչպես և գեղարվեստական գրականությունը նույնպես մշակակալից տեղ ունեն հայերեն հնատիպ գրականության մեջ: Մոտ 300 տարվա ընթացքում ստեղծված հայերեն հնատիպ գրականությունը, հայ մշակույթի շատ հարուստ, բովանդակալից հատվածն է:

(Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, հատոր IV, էջ 621—625):

